ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար սեղան թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 06.12.2023թ.-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 08.12.2023թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Բարև Ձեզ: Հարգելի գործընկեր, Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցը. ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50 ծածկագրով մրցույթի երկրորդ չափաբաժնում նշված է, որ ավտոմեքենայի շարժիչի ծավալը պետք է լինի 2.3լ-3.5լ: Այն ավտոմեքենայի մոդելը, որով մենք ցանկանում ենք մասնակցել մրցույթին, իր շարժիչի ծավալը 1.5լ տուրբո է և 167 ձիաուժ: Ձիաուժով և մնացած այլ նշված պարամետրերով համապատասխանում է, միայն այդ շարժիչի ծավալն է (1.5լ տուրբոն հզոր շարժիչ է և նշված դիապազոնի մեջ հանգիստ տեղավորվում է): Եվ մյուս պարզաբանումը, կապված մատակարարման օրերի հետ: Եթե մեր ընկերությունը հաղթող ճանաչվի այդ մրցույթում, ապա ավտոմեքենաները կարող ենք մատակարարել պայմանագիրը ստորագրելուց հետո մինչև 90 օրացուցային օրվա ընթացքում: Ուստի, խնդրում եմ Ձեզ, տալ վերոնշյալ հարցերի պարզաբանումները, որպեսզի իմանանք կարող ենք մասնակցել մեր նշված ավտոմեքենայի պարամետրերով և մատակարարման ժամկետներով, թե ոչ: Նախապես շնորհակալություն:»

<u>Պարզաբանում</u>

«Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մատակարարման ժամկետը սահմանված է «Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր:»»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: